

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՆԵՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ

Ա. Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերությունների համակարգի իրավական կարգավորումը հրատապ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի ձևավորման, պետական ու հասարակական ինստիտուտների կայացման գործում: Այն ունի ոչ միայն տեսական, այլև կիրառական մեծ նշանակություն և կարևորություն: Քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերության ձևերն ու եղանակները բազմազան են ու տարաբնույթ և իրարից տարբերվում են իրենց կազմակերպման մեխանիզմներով: Մասնագիտական գրականության մեջ¹ պետության առանձնահատկությունների հետազոտումը կապված է քաղաքացիական հասարակության առանձնահատկությունների ուսումնասիրության հետ, իսկ քաղաքացիական հասարակության առանձնահատկությունների հետազոտումը՝ պետության առանձնահատկությունների ուսումնասիրության հետ: Այս հիմնահարցերի հետազոտությունն ու բազմակողմանի ուսումնասիրություններն անկասկած կարևոր նշանակություն ունեն ինչպես քաղաքացիական հասարակության, այնպես էլ պետության, պետական ինստիտուտների առանձնահատկությունների բացահայտման համար: Դրանք հասարակության ամբողջական համակարգի գլխավոր տարրերն են, հասարակական հարաբերությունների կազմակերպվածության ու զարգացման արդյունք և հնարավոր են միայն որոշակի տեսեսական, սոցիալական, քաղաքական, իրավական պայմանների առկայության դեպքում: Ինչպես որ քաղաքացիական հասարակության առանձնահատկությունները որոշակիորեն պայմանավորում են պետության ձևերը, այնպես էլ պետությունը պայմանավորում է քաղաքացիական հասարակության ձևերը:

Հասարակության քաղաքական համակարգի տարրերի ակտիվ գործունեության շնորհիվ պատմական որոշակի ժամանակաշրջանում ստեղծվում են նախադրյալներ քաղաքացիական հասարակության ձևավորման համար: Պետությունը և քաղաքացիական հասարակությունը շպետք է հակադրել մեկը մյուսին, քանի որ հասարակության քաղաքական կեցության ինքնակազմակերպման որոշակի մակարդակում պայմաններ են ստեղծվում իրավական պետության ձևավորման համար: Հասարակության ինքնակառավարումը գոյություն ունի պետության և քաղաքացիական հասարակության համակարգի շնորհիվ:

Քաղաքական մտքի պատմության տարրեր ժամանակաշրջաններում² սահմանվել ու դասակարգվել են քաղաքացիական հասարակության բազմաթիվ ձևեր, որոնց հիմքում առաջադրվել են տարրեր սկզբունքներ:

Քաղաքացիական հասարակությունը, ինչպես և պետությունը, մարդկության պատմական զարգացման հետևանք է, որի առաջացման ու ձևավորման անհրաժեշտ պայմանն այն է, որ քաղաքացիները մասնավոր սեփականության հիմքի վրա ձեռք են բերում տնտեսական, սոցիալական, իրավական, քաղաքական ինքնուրույնություն³: Այստեղ առաջնայինը մարդկանց ան-

¹ Այդ մասին տե՛ս Ա. Ս. Кочетков, На пути к гражданскому обществу, М., 1992, էջ 332; А. Грамши, Избранные произведения в 3 т., М., 1959, т. 3, էջ 214; Л. С. Сави-стебан, Основы политической науки, М., 1992, էջ 20—24; П. К. Гончаров, Ю. В. Ир-хин, В. В. Крапивин, Начала политической науки, М., 1994, էջ 143—150 և այլն:

² Տե՛ս Цицерон, Диалоги, М. 1966, էջ 24; Платон, Сочинения, М., 1972, т. 3, ч. 2, էջ 187—190; Дж. Локк, Сочинения в 3 т., М., 1988 т. 3, էջ 312; М. Монтескье; Из-бранные произведения, М., 1965, էջ 290 և այլն:

³ Տե՛ս П. К. Гончаров, Ю. В. Ирхин, В. В. Крапивин, նշվ. աշխ., էջ 145—146; Д. Кола, Гражданское общество. В кн: «50/50 опыт словаря нового мышления» М., 1989, էջ 79; А. П. Кочетков, Западные политологи о гражданском обществе. — «Вест. Моск. ун-та», М., 1994, № 2, էջ 68—77; А. М. Добринин, Социально-политиче-ские учения нового времени, М., 1958, էջ 370 և այլն:

Հատականությունն ու իրավունքների համակարգի հավասարությունն է:

Հասարակական հարաբերությունների համակարգում ընթացող ժողովրդավարական գործընթացները ստեղծում են որոշակի պայմաններ ինքնակառավարման ինստիտուտների ձևավորման և զարգացման համար: Այդ ինստիտուտների միջև փոխհարաբերությունների ակտիվացումը հիմք է դնում նոր տիպի հասարակության ստեղծման:

Նոր հասարակության կենտրոնը հասարակական ու պետական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության ձևավորումն է: Իսկ քաղաքացիական հասարակությունը «պետությունից անկախ և նրան համապատասխան հասարակական կյանքի առանձնահատուկ ոլորտն է»⁴:

Ռուս քաղաքագետ Ա. Կոշետկովը քաղաքացիական հասարակությունը սահմանում է որպես «սոստեսական, սոցիալ-քաղաքական, կրոնական, հոգևոր-բարոյական, ընտանեկան, մշակութային և այլ հասարակական հարաբերությունների համակարգ, որն արտահայտում է հասարակության քաղաքացիների կամքը և որոշում է պետության քաղաքականությունը»⁵:

Ա. Գրամշիի կարծիքով «քաղաքացիական հասարակությունը գտնվում է տնտեսական բազիսի և պետության օրենսդրության... միջև»⁶: Իսկ ռուս անվանի սոցիոլոգ Ի. Կրավչենկոն նշում է, որ քաղաքացիական հասարակությունը «... անհատների միջև զարգացած տնտեսական, մշակութային, իրավական, քաղաքական հարաբերությունների ամբողջությունն է, որոնք չեն միջնորդավորված պետության կողմից»⁷: Քաղաքացիական հասարակությունը դեմոկրատական պետություններում ձևավորվող ու զարգացող մարդկային հանրությունն է, որը հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում կամավոր ձևավորված ոչ պետական կազմակերպությունների համակարգ է⁸: Քաղաքացիական հասարակության գոյության ու ձևավորման անմիջական նախադրյալները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում անձանց ազատությունների ու իրավունքների ապահովումն է:

Նույնիսկ ամբողջատիրական, միապետական ուժիմների պայմաններում կարող են գոյություն ունենալ քաղաքացիական հասարակության ձևավորման տարրեր, սակայն անհրաժեշտ պայմանների բացակայությունը, որը ապահովում է պետական իշխանությունից այդ տարրերի ինքնուրույնությունը՝ ինքնակազմակերպման ու ինքնագործունեության իրավունքը, զրկում է հասարակությանը քաղաքացիական հասարակություն լինելու հնարավորությունից: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր անձ հստակ իմանա, թե ինչ սահմաններում է ինքը պաշտպանված կողմնակի միջամտությունից, և ինչ դեպքերում պետությունը կարող է ազդել իր ծրագրերի իրականացման վրա⁹: Իսկ մյուս կողմից «... միապետությունը... ընդհանրապես անհամատեղելի է քաղաքացիական հասարակության հետ և հետևաբար չի կարող լինել քաղաքացիական կառավարման ձև»¹⁰:

Ա. Միհրանյանի կարծիքով, «քաղաքացիական հասարակությունը ու քաղաքացիների կողմից կամավոր ձևավորված կազմակերպությունների, ասոցիացիաների սպոնտան ինքնադրսևորման ոլորտն է, որտեղ այդ քաղաքացիների գործունեությունը պաշտպանված է անհրաժեշտ օրենքներով պետական իշխանության օրգանների կամայական ու ուղղակի միջամտությունից»¹¹: Քաղաքացիական հասարակությունը «... արդարության սկզբունքի վրա հիմնված հանրություն է, որտեղ մարդն իր համար կարող է գտնել բարձրագույն բարիք»¹²:

Քաղաքացիական հասարակության ձևավորման պրորբլեմը հասարակության քաղաքական համակարգի տարրեր կառուցվածքային ձևերի գործառնության ձևավորման հարցն է, որը հիմնված է նրա տնտեսական, սոցիալական, քաղաքական, իրավական հարաբերությունների ու ոլորտների վրա: Միաժամանակ նրա առաջացումը ինքնակազմակերպման և ինքնազարգացման ընդունակ ինստիտուտների ձևավորումն է, որոնք անհրաժեշտ են քաղաքացիների արժանապատիվ ու բարենկեցիկ կյանքի ապահովման համար: Ժամանակակից պայմաններում հասարակական կյանքի տարրեր ոլորտներում ընթացող ժողովրդավարական գործընթացները ստեղծում են որոշակի նախադրյալներ ինքնակառավարման ինստիտուտների զարգացման համար:

«Քանի որ հասարակությունը ձևավորում է պետության գործունեությունը վերահսկող մե-

⁴ А. Демидов, А. Федосеев. Основы политологии. М., 1995, с. 129.

⁵ Տե՛ս А. И. Кочетков, նշվ. աշխ., էջ 31:

⁶ А. Грамши, Тюремные тетради, М., 1991, с. 308.

⁷ И. И. Кравченко, Концепция гражданского общества в философском развитии. — «Политические исследования». М., 1991, № 5, с. 136:

⁸ Տե՛ս նույն տեղը:

⁹ Տե՛ս Ф. А. Хайек, Дорога к рабству. — «Вопросы философии», М., 1990, № 11, էջ 128:

¹⁰ Дж. Локк, Сочинения в 3 томах. М., 1988, т. 3, с. 312.

¹¹ А. М. Мигранян, Гражданское общество. В кн. «50/50: опыт словаря нового мышления», М., 1989, с. 446—447.

¹² Տե՛ս Д. Кола, նշվ. աշխ., էջ 79:

խանիզմներ, ապա նա սահմանում է և սկզբունքները, որոնց հիման վրա պետությունը կարող է և պարտավոր է գործել»¹³;

Հասարակական հարաբերությունների դեմոկրատականացումը ենթադրում է նաև պետական ապարատի, կառույցների բոլոր մակարդակների վերակառուցում: Քաղաքացիական հասարակությունը հասարակական հարաբերությունների (տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլն), ձևական և ոչ ձևական կառույցների ամբողջություն է, որոնց շրջանակներում բավարարվում և իրականացվում են անհատների, նրանց խմբերի բազմազան պահանջություններն ու շահերը հասարակության զարգացման մակարդակին համարժեք»¹⁴:

Քաղաքական ինստիտուտների ձևավորման պրոցեսում պետությունը այդ փուլում դեռևս կայացած քաղաքական ինստիտուտ չէ, քանի որ հարկավոր է պետականությանը հակադրել ոչ պետական, ոչ բռնատիրական հասարակայնություն...¹⁵:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտների և սկզբունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն չի սպառում իր համակարգին բնորոշ առանձնահատկությունները, որի ձևավորման պայմաններում տեղի են ունենում տնտեսական, հասարակական, իրավական, քաղաքական հարաբերությունների ձևափոխություններ: Յուրաքանչյուր կոնկրետ պատմական պայմաններում նրան բնորոշ է ձևավորման առանձնահատուկ, ինքնատիպ սկզբունքներ ու օրինաչափություններ, որոնք մինչև այժմ մնում են հակասական և բազմաբնույթ: Պատահական չէ, որ մասնագիտական գրականության մեջ քաղաքացիական հասարակության ձևավորման պայմանները, սոցիալական սկզբունքներն ու բնիկները կազմում են ընդհանուր կամքի, շահերի արտահայտման և իրականացման մեխանիզմները, որոնք կարգավորում են սոցիալական հակասությունները:

Ա. Միհրանյանը «Վերախմբավորելով կոնսերվատիվները հողավածի մեջ նշում է, որ «կոնսերվատիզմի կողմնակիցների կողմից առաջադրված պատկերացումները պետության օրգանական բնույթի մասին կրկին հրատապ դարձան և այս կամ այն շափով իրականացվեցին միայն այն բանից հետո, երբ արևմուտքը սկսեց հաղթահարել լիբերալիզմի laissez-faire դարաշրջանի կոնցեպցիան և պետությունը սկսեց միջամտել քաղաքացիական հասարակության կյանքին՝ փորձելով ներդաշնակեցնել շահերը սոցիալ-տնտեսական ոլորտի մեջ»¹⁶:

Ինչպես արդեն նշեցինք, քաղաքացիական հասարակության (der burgerliche Gesellschaft) կազմավորումը պատմականորեն կապված է պետության, պետական իշխանության ու կառուցվածքի առաջացման, ինչպես նաև հասարակական ինստիտուտների հետ, որոնց միջոցով իրականացվում է հասարակական ու քաղաքացիական գործունեությունը: Այն պարունակում է հասարակական ինստիտուտները, հասարակության քաղաքական կուլտուրան, քաղաքական իշխանության իրականացման մեխանիզմները և այն ամենը, ինչ կապված է քաղաքացիական, հասարակական որոշումների ընդունման և կիրառման հետ:

«Մինչև այժմ գոյություն ունեցած բոլոր պատմական աստիճաններում արտադրողական ուժերով պայմանավորվող և իր հերթին դրանք պայմանավորող հաղորդակցման ձևը քաղաքացիական հասարակությունն է, որի նախադրյալն ու հիմքը պարզ ընտանիքն է և բարդ ընտանիքը...»¹⁷:

Վերը նշվածից երևում է, որ «այդ քաղաքացիական հասարակությունն ամբողջ պատմության իսկական օջախն է և իսկական ասպարեզը»¹⁸:

Քաղաքացիական հասարակությունը ձևավորում է քաղաքացիների միջև գործունեության ու հարաբերությունների ինքնատիպ քննազավառ, որը միավորում է նրանց կողմից ստեղծված կազմակերպություններն ու ինստիտուտները, նրանց ձևավորման օբյեկտիվ օրինաչափությունները, հնարավորությունները, նպատակները և մեխանիզմները: Պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների համակարգի ձևավորման գործընթացում կարևորվում են նաև քաղաքացիների, սոցիալական խմբերի քաղաքական, տնտեսական, իրավական գործունեության սահմանները, նրանց վարքագիծը, որոնք որոշակի ուղղվածություն են տալիս հասարակության ամբողջական համակարգին՝ կազմելով քաղաքական կյանքի առանցքը:

Ա. Հայեկը, անդրադառնալով պետության ու քաղաքացիական հասարակության փոխհարաբերության հարցին, գրում է. «Պետք է արդյոք պետությունը «գործի» կամ «միջամտի» հարցը

¹³ Б. Я. Замбровский, К вопросу о формировании гражданского общества и правового государства.— «Социально-полит. науки», М., 1991, № 6, с. 32:

¹⁴ А. В. Одицова, Гражданское общество: прошлое, настоящее, будущее.— «Социально-полит. науки», М., 1991, № 12, с. 41.

¹⁵ Sճ՝ս Н. А. Бердяев, Истоки и смысл русского коммунизма. М., 1990, էջ 171:

¹⁶ А. М. Миграция, Переосмысливая консерватизм.— «Вопросы философии», М., 1990, № 11, с. 119.

¹⁷ Կ. Մարքս, Ֆ. էնգելս, Երկեր, Եր., 1987, հ. 3, էջ 43:

¹⁸ Sճ՝ս նույն տեղը:

անիմաստ է դառնում, իսկ «laissez-faire» տերմինը, ինչպես ինձ է թվում, մոլորության մեջ է գցում՝ ստեղծելով ոչ ճիշտ պատկերացում լիբերալ քաղաքականության սկզբունքների մասին¹⁹։ Այսպիսով, նշված պրոբլեմի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու քաղաքական գործընթացների էական ակունքները և շարժիչ ուժերը, ինչպես նաև դրանց սոցիալ-պատմական տեսակետները, գործառնության ու զարգացման օրինաչափությունները և միտումները։ Ժողովրդական հասարակության մեջ ... ընդհանրապես ոչ թե պետության կողմից է պայմանավորվում ու սահմանվում քաղաքացիական հասարակությունը, այլ քաղաքացիական հասարակության կողմից է պայմանավորվում ու սահմանվում պետությունը²⁰։

Պատմականորեն ձևավորված որոշակի պայմաններում հասարակական շահերի ու պահանջ-մտնքների համակարգը սահմանում է հասարակական ինստիտուտների ու քաղաքացիների գործունեությանը բնորոշ մի շարք օրինաչափություններ։ Այդ օրինաչափությունները և միտումները արտահայտվում ու ամրագրվում են հասարակական նորմերի որոշակի համակարգում, որոնք կարգավորում են մարդկանց վարքը և հարաբերությունը պետական իշխանության նկատմամբ։ Հասարակության անդամների ներգրավվածությունը քաղաքական կյանքին, նրանց քաղաքական պահանջները, սպասելիքները (քաղաքական մասնակցությունը) բնութագրում են հասարակական ինստիտուտների հարաբերությունը (քաղաքական վերաբերմունքը) պետական ինստիտուտների նկատմամբ։ Ըստ Ռ. Շտայների, ... պետությունը, ըստ էության, իր գործունեության ընթացքում պետք է հիմնվի և առաջնորդվի այնպիսի սկզբունքներով, որոնք բխում են բոլոր մարդկանց հավասարությունից, իրավահավասարությունից²¹։

Հասարակական և պետական ինստիտուտների միջև փոխհարաբերությունների իրավական համակարգի ձևավորումը հնարավորություն է տալիս հասարակության մեջ քաղաքական իշխանության տարբեր ենթահամակարգերի առաջացման և ակտիվ փոխազդեցության։ Այստեղ կարևորվում է հասարակական կառույցների, քաղաքացիների գործունեությունը քաղաքացիական հասարակության ինքնատիպ մոդելի ստեղծման գործում։ «Էնեց դրա համար էլ այն ամենը, ինչ վերաբերում է մարդկանց անհատական ընդունակությունների ուղղվածությանը և կիրառմանը, պետք է ազատ լինի պետական իշխանության միջամտությունից²²։ Քաղաքացիական հասարակության այդպիսի մոդելը ապահովում է հասարակության քաղաքական կեցության կազմակերպումը, կառուցվածքային ու գործառնական կայունությունը՝ ստեղծելով նոր փոխհարաբերությունների համակարգ։

Վ. Սմոլկովի կարծիքով քաղաքացիական հասարակությունը այնպիսի հասարակությունն է, որտեղ «մարդուն օրենքով նրաշնամբարվում է իր տնտեսական ու քաղաքական կեցության ազատ ընտրություն՝ ամրագրելով մարդու համընդհանուր իրավունքները...»²³։

Այդ փոխհարաբերությունների համակարգում կարևորվում է հասարակական ու պետական ինստիտուտների քաղաքական ընդունակությունը, նրանց հակվածությունը որոշակի քաղաքական արժեքների համակարգի նկատմամբ։ Հասարակության քաղաքական կյանքում քաղաքացիական հասարակությունը ապահովում է պետության ու հասարակության գործերին բոլոր քաղաքացիների ազատ մասնակցությունը²⁴։ Հասարակության անցումնային ժամանակաշրջանում տեղի է ունենում գոյություն ունեցող քաղաքական կարգի փոփոխություն և նորի ձևավորում, որի շրջանում ստեղծվում են հասարակական հարաբերությունների կարգավորման նոր մեխանիզմներ։ Այդպիսի հասարակությունը անվանում են ռեֆորմիստական հասարակություն։ Այստեղ էական է այն հանգամանքը, որ հասարակական օրգանիզմների փոփոխությունն առաջացնում է նախևառաջ քաղաքական ինստիտուտների բովանդակության ու ձևի փոփոխություն։ «Այդ ժամանակ քաղաքական, պետական կարգը հնարավորություն է ստանում իր կողմից ստեղծված կարգուկանոնի միջոցով ազդելու մարդկանց տնտեսական հարաբերությունների վրա այնպես, որ յուրաքանչյուր մարդու զբաղեցրած դիրքը... հակադրության մեջ չմտնի նրա իրավագիտակցության, նրա մարդկային արժանապատվության զգացողության հետ»²⁵։

Մի շարք քաղաքագետների կարծիքով տեղի է ունենում հասարակության, հասարակական ինստիտուտների էտապիզացիա, որը կարող է հանգեցնել քաղաքացիական հասարակության թուլացման կամ նրա ձևավորման գործընթացի դանդաղեցման։ Նրանց կարծիքով այդ ամենը

¹⁹ А. Ф. Хайек, *ibid.* աշխ., էջ 128։

²⁰ К. Маркс и Ф. Энгельс, *Сочинения*, М., 1961, т. 21, с. 220։

²¹ Р. Штайнер, *Основные черты социального вопроса в жизненных условиях настоящего и будущего*, Ереван, 1992, с. 85։

²² Տե՛ս նույն տեղը։

²³ В. Г. Смолков, *Проблемы формирования гражданского общества. — «Социально-полит. науки»*, М., 1991, № 4, с. 9—10։

²⁴ Նույն տեղում, էջ 10։

²⁵ Р. Штайнер, *ibid.* աշխ., էջ 72։

պայմանավորված է պետության սոցիալական գործառնությունների ընդլայնմամբ, որը մի շարք դեպքերում ամենևին էլ այդպես չէ:

Ժամանակակից պետության սոցիալական գործառնությունների ընդլայնումը, ազդեցության ուղորտների մեծացումը հասարակական կյանքի բոլոր ուղորտների նկատմամբ շպետք է կրի ինքնանպատակ բնույթ: Եվ ինչպես Վ. Լադարեն է նշում, «պետության հարաբերական ինքնուրույնություն հասկացությունը կոչված է արտացոլելու պետության ակտիվությունը հասարակական կյանքի բոլոր ուղորտներում»²⁶:

Օրինակ՝ ամբողջատիրական, միապետական ուղղվածություն ունեցող քաղաքական համակարգերում պետական ինստիտուտների առկայությունը բացառում է հասարակական այլ ինստիտուտների գոյությունը: Արդի պայմաններում պետության սոցիալական գործառնությունների ընդլայնումը հասարակական ինստիտուտների ակտիվ գործունեության արդյունք է, որը սովյալ հասարակության մեջ ինքնակառավարման մեխանիզմների զարգացման հիմքն է: Քաղաքացիական հասարակության ձևավորման որոշակի մակարդակը «... ընդգրկում է սովյալ աստիճանի ամբողջ առևտրական և արդյունաբերական կյանքը և այդ շափով դուրս է գալիս պետության ու ազգի սահմաններից...»²⁷:

Ընդ որում, պետական իշխանության կողմից իրականացվող էտապիզմը կախված է քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացման մակարդակից: Հասարակական համակարգի բոլոր մեխանիզմներն իրականացնում են սոցիալական համակարգերի հարաբերականորեն ինքնուրույն, կայուն զարգացումն ու ինքնակառավարումը:

Ընդ որում, «սոցիալական համակարգերում այդ մեխանիզմները պարտադիր չէ որ լինեն դեմոկրատական»²⁸: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ ինքնակառավարումը հասարակական կյանքի տարբեր ուղորտների ժողովրդավարական կազմակերպման հնարավոր մեխանիզմներից մեկն է: Դեմոկրատիայի ապահովումը սոցիալական համակարգերի կառավարման կարևորագույն ինստիտուտն է, որը գոյություն ունի հասարակական հարաբերությունների զարգացման որոշակի աստիճանում²⁹:

Հասարակական ինստիտուտների գործունեության ակտիվացումը, հասարակական կյանքի դեմոկրատացումը ընդլայնում են քաղաքացիական հասարակության համակարգի ինքնակառավարման մեխանիզմների բազան և դրա հետ միասին նաև պետական իշխանության սոցիալական ֆունկցիաները³⁰:

Այս երկու գործընթացների անհամապատասխանությունը հանգեցնում է հասարակական կարգուկանոնի թուլացման: Օրինակ, նախկին ԽՍՀՄ-ում, վերակառուցման գործընթացների որոշակի աստիճանում, երբ հասարակության վստահությունը իշխանության վարչաճրամայական ինստիտուտների նկատմամբ նվազեց, իսկ խորհուրդների սոցիալական ֆունկցիաների ընդլայնման պրոցեսը դանդաղեց, ապա ժողովրդի մեծամասնության գիտակցության մեջ ժողովրդավարությունը միակողմանիորեն նույնացվեց լիբերալիզմի հետ³¹:

Ակնհայտ է, որ պետության սոցիալական ֆունկցիաների ընդլայնումը շպետք է դիտարկել որպես նրա թուլացում: Պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերության պրոցեսում ձևավորվում է մի այնպիսի մեխանիզմ, որտեղ «... ոչ թե քաղաքացիական հասարակության հակասություններն են միջնորդավորում պետական խնդիրներով, այլ ընդհակառակը, իրենք են միջնորդավորում այդ խնդիրները՝ անմիջականորեն արտացոլվելով պետության գործառնության և նրա կառույցների վրա՝ ստղծելով համապատասխան օրենսդրության անհրաժեշտություն»³²: Պետական իշխանության մարմինների, նրա կառույցների կողմից իրականացվող քաղաքականությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերել այն հիմնական խնդիրները, որոնց հիման վրա որոշվում է պետական ինստիտուտների գործունեության ուղղությունները: Ըստ Ռուսոյի, «հասարակական դաշինքի» էությունը կայանում է նրանում, որ «յուրաքանչյուրը, միավորվելով բոլոր մյուսների հետ, ենթարկվում է միայն ինքն իրեն և մընում է նույնքան ազատ, ինչպես և նախկինում»³³:

²⁶ В. В. Лазарев, Теория государства и права. М., 1992, с. 41.

²⁷ Կ. Մարտ, Ֆ. էնգելս, նշվ. աշխ., էջ 91:

²⁸ О. Ф. Шабров, Демократия от иллюзии к реальности. — «Философские науки». М., 1990, № 10, с. 48.

²⁹ Տե՛ս նույն տեղը, 48—49:

³⁰ Այդ մասին տե՛ս Die Modernisierung der Demokratie. W. V., 1993, էջ 116—207, А. Ф. Хайек, նշվ. աշխ., — «Вопросы философии», М., 1990, № 10, էջ 151:

³¹ Տե՛ս О. Ф. Шабров, նշվ. աշխ., էջ 49:

³² Б. Я. Замбровский, նշվ. աշխ., էջ 32:

³³ Ж. Ж. Руссо, Трактаты, М., 1969, с. 161.

Սակայն, պետք է նշել, որ հասարակական ինստիտուտների ձևավորումը դեռևս բավական չէ, ինքնակառավարման մեխանիզմների զարգացման ու քաղաքացիական, հասարակության ձևավորման համար: Նրա ձևավորումն ավելի բարդ պրոցես է:

Եթե պետության նշանակությունը հասարակական հարաբերությունների սահմանադրորեն պահպանումն է, պետական իշխանության կամ քաղաքական կայունության ամրապնդումը, ապա քաղաքացիական հասարակությունը սոցիալական արդարության, պատասխանատվության, քաղաքացիների իրավունքների համակարգի իրականացման երաշխիքն է: Որոշակի պայմանների առկայության դեպքում, պետական ապարատը կարող է հարաբերականորեն ինքնուրույն լինել և՛ շատ դեպքերում գործնականում դառնալ հասարակությունից անկախ³⁴:

Այդ դեպքում այն արտահայտում է ոչ թե ամբողջ հասարակության, այլ այն սոցիալական խմբի կարծիքը, որին պատկանում է պետական իշխանությունը: «Պետությունը դառնում է հասարակությունից առանձնացված կառավարման ապարատ»³⁵: Այսինքն՝ պետությունը օտարվում է հասարակությունից:

Քաղաքացիական հասարակության ձևավորումը հասարակության քաղաքական կեցության դեմոկրատական կառավարման, ինքնակառավարման մեխանիզմների կազմավորման և իրականացման երաշխիքն է, սակայն երբ հասարակությունը գտնվում է անցումային շրջանում, ապա հասարակական համակարգի կայուն գործառնությունը ապահովելու համար անհրաժեշտություն է առաջանում, «որպեսզի քաղաքական ոլորտում պահպանվի ամուր իշխանություն, որը այդ փուլում կիրառելի դեմոկրատիայի սահմանափակում»³⁶, իրավական պետությունը կարող է ձևավորվել միայն քաղաքացիական հասարակության ինստիտուտների հիմքի վրա, որի մեջ այդ փուլում արդեն մտնում է նաև պետությունը: Հասարակության հիմքի վրա ձևավորում են պետությունը, պետական ինստիտուտները, իսկ վերջինիս հիմքի վրա նախադրյալներ են ստեղծվում քաղաքացիական հասարակության ձևավորման համար: Եթե քաղաքական համակարգի առանցքը պետությունն է, ապա քաղաքական կյանքի առանցքը քաղաքացիական հասարակությունն է: Հասարակական ինստիտուտների յուրաքանչյուր ենթահամակարգ պետական ինստիտուտների հետ կապված է ինքնատիպ գործառնական ու կառուցվածքային մեխանիզմներով: Այդպիսի ինստիտուցիոնալ կապը միաժամանակ ապահովում է քաղաքական համակարգի բոլոր տարրերի ինտեգրացիան: Հասարակությունը ստեղծում է ու ձևավորում պետական ինստիտուտները՝ ապահովելով հասարակական գործընթացների ինստիտուցիոնալ համակարգը: Նրա համար էլ չի կարելի «պետության ու ժողովրդի ինքնակառավարումը դիտարկել որպես երկու հակադիր կողմեր»³⁷:

Պետությունը հասարակության ինքնակառավարման իրականացման գլխավոր մեխանիզմներից մեկն է:

Քաղաքացիական հասարակության համակարգը արտացոլում է.

1. քաղաքացիների, հասարակության և պետական ինստիտուտների միջև տեղի ունեցող փոխհարաբերությունները,

2. քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների իրականացման մեխանիզմները,

3. հասարակական ինստիտուտների կառուցվածքը, կազմակերպման ձևերն ու եղանակները, ինչպես նաև՝ նրանց դերը քաղաքացիների գործունեության ու քաղաքական կեցության կազմակերպման գործում, հասարակական հարաբերությունների համակարգի տնտեսական, իրավական, քաղաքական հիմքը:

Հասարակության ինքնակառավարումը, հարակական կարծիքի ձևավորումը իրականացվում են քաղաքացիական հասարակության գործառնության մեխանիզմի միջոցով: Այն սոցիալական խմբերի, միավորումների, հասարակական կազմավորումների ամբողջությունն է, որտեղ իրականացվում է հասարակության ինքնակառավարումը:

Եթե համեմատենք պետության գործառնության մեխանիզմը քաղաքացիական հասարակության գործառնության մեխանիզմի հետ, ապա առաջին իրականացնում է հասարակության կառավարումը, իսկ երկրորդը՝ ինքնակառավարումը:

Հասարակական ու պետական ինստիտուտների ակտիվ գործառնության պայմանները որոշում են հասարակության ինքնակառավարման ձևերն ու եղանակները: Արդի պայմաններում սոցիալական խմբերի, դասակարգերի, խավերի, ազգերի, հասարակական կազմավորումների հարաբերությունը պայմանավորված՝ ազատությունը քաղաքական կառույցների իրավահավասար

³⁴ В. В. Лазарев, *ibid.*, աշխ., էջ 36—49:

³⁵ В. И. Ленин, Полн. собр. соч., М., 1963, т. 39, с. 69.

³⁶ А. М. Мигранян, Долгий путь к Европейскому дому. — «Новый мир», М., 1989, № 7, с. 169—170.

³⁷ А. П. Бутенко, Власть народа посредством народа, М., 1988, с. 38—39.

եար գործունեության հիմնական նրաշխիքն է³³, Քաղաքացիական Հասարակության ձևը ցույց է տալիս նրա կառուցվածքային ու գործառնական առանձնահատկությունները, որի մեջ մտնում են.

1. Ինքնակազմակերպման, ինքնակառավարման ձևը, այսինքն՝ հասարակական ինստիտուտների ձևավորման պայմանները, կազմակերպվածությունը և մեկը մյուսի հետ փոխհարաբերությունները կարգը,

2. կառուցվածքի ձևը, որը բնութագրում է հասարակական ինստիտուտների հիերարխիան, հասարակական կարծիքի ձևավորման մեխանիզմները:

Ինչպես արդեն նշեցինք, կան քաղաքացիական հասարակության մի շարք դասակարգումներ³⁰, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ ձևերը. «բացարձակ, հարաբերական և իրական»⁴⁰, որտեղ բացարձակը հասարակության զարգացման գերագույն նպատակն է, հարաբերականը՝ որպես հնարավոր, իսկ իրականը՝ որպես պատմական ձև որևէ երկրի մեջ⁴¹:

Այսպիսով, իրականում մենք գործ ունենք բուն քաղաքացիական հասարակության գործառնության մեխանիզմի հետ:

«Այլ կերպ ասած՝ հասարակությունը «քաղաքացիական» է այնքանով, որքանով որ հասարակական հարաբերությունների ամբողջությունը համապատասխանում է բնապատմական պրոցեսների պահանջներին, և դրա հետ միասին պայմաններ է ստեղծվում հասարակության արտադրողական ուժերի ազատ զարգացման համար և նախևառաջ նրա գլխավոր ուժի՝ մարդու համար»⁴²:

Պետական կառավարման օրգանները, մեխանիզմները և նրանց կողմից հասարակության կառավարման կազմակերպումը պայմանավորված են նրանց քաղաքական ընդունակությամբ: Պետական իշխանության մարմինների հարաբերությամբ «... պետական բոլոր ինստիտուտների կողքին պառլամենտը ժողովրդական ներկայացուցչության միակ օրգանն է»⁴³:

Երկրի քաղաքացիների և նրանց կողմից ստեղծված տարբեր կազմակերպությունների հետ գործադիր իշխանության մարմինների ունեցած հարաբերությունը պետական կառավարման առանձնահատուկ մեխանիզմների համակարգ է: Հասարակական հարաբերությունների համակարգում տեղի է ունենում յուրաքանչյուր հասարակության անդամի իրավական վիճակի ամրագրում, որի հիման վրա ձևավորվում են իրավունքի տարբեր ենթահամակարգեր, որոնցից ամեն մեկը կարգավորվում է հասարակական հարաբերությունների համապատասխան բնագավառը: Մի գեպքում քաղաքացիական հասարակության անդամների միջև հարաբերությունների համակարգը հիմնվում է իշխանության և ենթարկման վրա, իսկ մյուս դեպքում՝ բոլորի իրավահավասարության վրա: Այսինքն՝ բոլորը միասին կառավարվում են և կառավարում: Այսպիսով, հասարակության անդամների կողմից իրականացվող տնտեսական, սոցիալական, իրավական, քաղաքական գործունեությունը կկարգավորվի երկու տիպի օրինաչափություններով՝ մի կողմից նրանք կհայտնվեն պետական, իսկ մյուս կողմից՝ հասարակական կառույցների ու մեխանիզմների ազդեցության տակ: «Քանի որ պետությունն այն ձևն է, որտեղ տիրապետող դասակարգին պատկանող անհատները իրագործում են իրենց ընդհանուր շահերը և որի մեջ սովյալ դարաշրջանի ամբողջ քաղաքացիական հասարակությունը գտնում է իր խտացված արտահայտությունը, ապա դրանից հետևում է, որ բոլոր ընդհանուր հաստատությունները միջնորդավորվում են պետության միջոցով, ստանում քաղաքական ձև»⁴⁴:

«Իսկ պոլիարխիան նախ և առաջ կարող է դիտարկվել որպես ժամանակակից պետության կառավարման համար ինքնատիպ ուժեղ մեխանիզմ»⁴⁵: Քաղաքացիական հասարակությունը քաղաքացիների, սոցիալական խմբերի, կազմավորումների միջև տեղի ունեցող հասարակական

³⁰ Տե՛ս Բ. Ե. Давидович, М. С. Коган, Диалектика необходимости и свободы. — «Философские науки», М., 1985, № 4, էջ 53.

³⁹ Տե՛ս Ա. Арато, Демократия элиты или демократизация гражданского общества? — «Политология вчера и сегодня». М., 1991, вып. 3, էջ 122; А. Грамши, Тюремные тетради. М., 1991, էջ 308, М. Ильин, Б. Коваль Две стороны одной медали: гражданское общество и государство. — «Полис», М., 1992, № 1—2, էջ 198—199, Д. Плевник, Пути и перепутья гражданского общества. — «Политическая вчера и сегодня», вып. I, М., 1990, էջ 149, Р. Даль, Введение в теорию демократии. М., 1992, էջ 8—21 և այլն:

⁴⁰ А. В. Одинцова, նշվ. աշխ., էջ 42:

⁴¹ Տե՛ս նույն տեղը, էջ 42—44:

⁴² Տե՛ս նույն տեղը, էջ 43:

⁴³ И. В. Котелевская, Современный парламент. — «Государство и право». М., 1997, № 3, с. 13.

⁴⁴ Կ. Մադիս, Տ. Էնգելս, նշվ. աշխ., էջ 93:

⁴⁵ Р. Даль, Полигархия, плюрализм и пронстранство. — «Вопросы философии», М., 1994, № 3, с. 38—39.

Հարաբերությունների համակարգային ամբողջությունն է, որի նպատակը իրավական պետության ձևավորումն է: Ընդ որում, այդ սոցիալական կազմավորումները, խմբերը ստեղծված են քաղաքացիների կողմից՝ ապահովելով հասարակության ինքնակառավարման ու որոշակի նպատակների իրականացումը: Իսկ դեմոկրատիայի գոյության երաշխիքը «քաղաքացիական հասարակության նախադրյալների ստեղծումն է»⁴⁶: Այդ պրոցեսում ձևավորվում է փոխհարաբերությունների որոշակի համակարգ.

1. հասարակական ինստիտուտները փոխազդում են պետական ինստիտուտների համակարգի վրա, ինչպես նաև՝ բնակչության և առանձին անձանց վրա,

2. հասարակական ինստիտուտների գործունեությունը, քաղաքացիական հասարակության ձևավորումը լեգիտիմ է դարձնում պետական ինստիտուտների գործունեությունը՝ որոշելով նրանց լեգիտիմության սահմանները և ձևերը,

3. այդ գործունեության միջոցով սահմանվում են պետական ինստիտուտների գործունեության ոլորտները, ամրագրում քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների համակարգին պետական իշխանության միջամտության սահմանները,

4. միաժամանակ այդ ինստիտուտները ամրագրում են ժողովրդի կամ տվյալ էթնիկ հանրության առանձնահատուկ նպատակները, շահերը՝ իրականացնելով կամ ազդելով նրանց գործունեության բոլոր ոլորտների վրա:

Քաղաքացիական հասարակությունը հասարակության ինքնակազմակերպման բարձրագույն աստիճաններից մեկն է, հասարակական ինստիտուտների այնպիսի ամբողջություն, որն իրականացնում է անձանց միջև տնտեսական, սոցիալական, իրավական, քաղաքական հարաբերությունների ինքնակառավարումը:

А. С. АЛЕКСАНИАН—К вопросу о взаимоотношении гражданского общества и государства.— Формирование системы правовых взаимоотношений между государством и гражданским обществом является актуальным в Республике Армения.

Государство и гражданское общество существуют как основополагающие элементы системы общества. Гражданское общество, как одна из степеней самоорганизации политического бытия общества, является совокупностью общественных институтов, которые реализуют между членами общества экономические, социальные, правовые, политические отношения самоуправления. Государство—первооснова для формирования гражданского общества. Между государством и гражданским обществом есть институциональное различие по организации системы права.

Взаимоотношения государства и гражданского общества формируются на соответствующем уровне развития общественных отношений, когда создаются условия для становления правового государства.

Как гражданское общество своими особенностями определяет сущность государства, систему государственных институтов, так и государство в какой-то степени предполагает виды формирования гражданского общества.

⁴⁶ Р. Дерендорф. Дорога к свободе: демократизация и ее проблемы в Восточной Европе.— «Вопросы философии», № 3, с. 74.